

ՔԷՓՈՒՐ ԿԱՄ ՏՕՆ ՔԱՆՈՒԹԵԱՆ ՀՐԷԻՑ

Հրէից Քաւութեան Տօնն չք գիտեմք թէ ուրիշ տեղեր ինչպէս կը կատարուի, բայց Երուսաղէմի մէջ այնչափ խիստ պատրաստութիւններ և ծովնապահութիւններ կան, որ ափշութեան արժանի է: Տօնախմբութեան օրն հասած ժամանակ, արտասուայ և խոր հառաչանայ հետ՝ շատերն իրենց կուրծքերն կը ծեծեն և դարհարելի շարժումներ կ'անեն:

Այս տարի Քաւութեան տօնակատարութեան ժամանակ, որ ամսոյս 9ին պատահեցաւ, մի Հրէայ սաստիկ ծովնապահութիւնն և կուրծքը ծեծելէն ժողովարանի (Սինագոգայի) մէջ նուազեցաւ ընկաւ և մեռաւ:

Արդարեւ՝ մի կողմէն խիստ սրտաշարժ տեսարան կը ներկայացնէ Հրէից հայրենասիրութիւնն, որոնք ամեն տարի խուճիկ խուճիկ ՚ի Պաղեստին կը գիւմեն, գեօփիններ կ'առնուն, բնակարաններ կը հաստատեն և շատ անգամ Սողոմոնեան Տաճարի պարսպին տակ, ծեր և մանուկ, շարան շարան կը կանգնին (բոտ որում իրաւունք չունին Քրիստոնէից նման պարսպէններս և ՚ի Տաճարն մանելու) իրենց երեւներն պարզապիք քարերուն կը քսեն, կը հեկեկան, կ'որտասուեն և յարտասուս կը շարժեն անտոյներն. բայց միւս կողմէն ևս շատ ցուպի է, որ Քրիստոնէութեան ծոցոյն մէջ, Վեօիայի գալստեան յիշատակներով նուիրագործուած Երկրին մէջ, տակաւին խտիւ կը շարունակեն իրենց Հրէական օրինապահութիւն, որան մէջ, Աստուածաշունչն արտաքոյ, խիստ անհեթեթ այլանդակութիւններ կան, լճերէս Թալմուտի եւ Տօրայի քաղմադիմի մեկնութիւններն տարածուած խորհրդեան մէջ:

Շատ զարմանալի է, որ յատկապէս

Հրէից քրիստոնէական վերադարձին համար կազմուած Անգղիական առաքելական Ընկերութիւնն, որ ձրի հիւանդանոցներ, դեղարաններ, բժշկներ, դպրոցներ եւ քարոզիչներ ունի Երուսաղէմի մէջ, իւր մեծածախ գոհալութեանց փոխարէն խիստ սակաւ կը յաջողի Հրէաներ շահել ՚ի քրիստոնէութիւն: Քարոզիչներու անգուլ գործունէութեան դէմ կ'երե՛ի նաեւ ունկնդիր Հրէից կողմէն սաստիկ ընդիմութիւն և ատելութիւն, Երբեմն կը տեսնուի, որ քարոզիչն կը քարոզէ և Հրէից պատանիքն հայհոյանքներ կը թափեն դիմուն, Քարոզիչն չք զայրանար ամենեւին, չնդհատէր իւր խօսքըն, այլ ամենայն մեղմութեամբ կը շարունակէ իւր քարոզն, բայց միւս կողմէն աւելի կը դրդուին և շատ անգամ լճանելով՝ կանցնին կ'երթան:

Թորին ու շաղբութեան արժանի է այս երեւոյթն եւ մեք որչափ հետազօտած եմք, ուրիշ առիթ չեմք գտած այս սաստիկ ընդդիմութեան, եթէ ոչ, որ Հրէայք ամենեւեկան առհասարակ պարտաւորութիւն համարած են մանկութենէ ուսանիլ և յաճախ կարդալ հրէական մեկնութիւններն: Հարցասիրութեան համար սրտահաճ է, որ մտած եմք իրենց վարժարանն և տեսած եմք ոչ միայն մանուկներ, այլ նաեւ շատ հասակաւոր մարդիկ, որոնք զբաղուած են միմիայն կրօնական գրքեր կարդալու, և շատերն այնչափ յափշտակութեամբ, այնչափ բարձրաձայն եռանդով կը կարդան, որ և ոչ կը նային ներս մանող կամ իրենց մօտ կանգնող մարդուն վերայ:

Այն օրը, որ Հրէայք Քաւութեան Տօնն կը կատարեն և հեծե՛ծանքներով ու աղաղակներով Սինագոգան կը լծնդայնեն, Անգղիոյ առաքելական Ընկերութիւնն եւս, առանձին գու-

Երբուած, ազօթքներ և մնղթանքներ  
կանէ Հրէից բրիտանեական դարձին  
համար:

ԵՐԿԱԹՈՒՂԻ ՅՈՊՊԷՆ ՅԵՐՈՒՍԱԴԷՄ

Երբու տարի առաջ լուր տարած  
ուեցաւ, որ Երուսաղէմի համար եր  
կաթուղի պիտի շինուի: Այս մասին  
յատուկ երկրաչափներ եկան և սկսան  
մանրամասն նկատողութեան առնուլ  
եւ ամենայն ստորագայիւք ծրուագիր  
պատրաստել:

Բոլոր ժողովուրդն յանչափա ու  
բախտացու և որ աւուր անհամբեր կը  
տպասէր կատարումն տեսնել, որով  
անշուշտ Պաղէստին քաղաքակրթու  
թեան ճանապարհի մէջ պիտի մտնէր  
և մեծամեծ գիւրութիւններ պիտի ու  
նենար յառաջագիւրութիւն: Մանաւանդ՝  
ուեղի ուրախային այն էր, որ խօսք կար  
թէ՛ երկաթուղւոյ պատճառաւ Յուդ  
պէ նաւահանգիստն ևս պիտի շինուի:

Սակայն տարիներ անցան և տակա  
ւին սկզբնաւորութիւնն անգամ չը  
տեսնուեցաւ ՚իցաւ որտի ամենեցուն:

Թէև և խկուպէս յայտնի չէ թէ ինչ  
պատճառներով յետ մնաց այս բարի  
գիտաւորութեան կատարումն. միայն  
բնդհանուր համարումն այս է, որ այն  
երկաթուղւոյ շինութիւնն մեծ պա  
տիւ կարող է բերել Օսմանեան Տէ  
րութեան, վասն զի Թուրքիոյ Կայսե  
րութեան մէջ Պաղէստին այն երկիրն  
կամ Նահանգն է, ուր ամենէն աւելի  
Ներսպացիք և Ամերիկացիք կը յաճա  
խեն, և հետեւապէս, Թուրքիոյ վի  
ճակն Պաղէստինի վիճակէն կը կշռեն:

Թէ իւր փառաց և թէ՛ ժողովրդի  
բարեկեցութեան համար իրատ փա  
փաքելն էր որ Տէրութիւնն չը յետա  
ձրդէր արդէն իսկ հրատարակուած  
այն բարի գիտաւորութիւնն:

ԺԱՄԱՆԵԱԿԱԳՐԱԿԱՆԻՔ

Պաղէստինի կառավարիչ Քեամիլ  
Փաշան, որ կ' Պօլիս կոչուած էր, վե  
րագործաւ ՚ի քաղաքս իւր պաշտօնն  
չարունակելու եւ Պատրիարքաց ու  
Հիւպատոսաց այցելութիւններն ըն  
դունելէն զինի՛ ինքն եւս փոխադար  
ձարար այց ելաւ ամենուն:

Տեսնենք թէ ինչ վախճան պիտի  
ունենան Ս. Ըժուոյս իրաւանց խն  
դիրներն, որոց համար շարունակ կը  
տաղնապիսք և դարման մի գտնելու  
համար յատկապէս Պօլիս զրիւեցաւ,  
փոխանորդութեան առ ժամանակեաց  
պաշտօնիւ, Քեամիլա Սիմօն եւ  
պիտիպոսն, որ քաջահմուտ է թէ՛  
հակառակորդաց կողմէն եղած դար  
ձուածներուն և թէ՛ Ս. Ըժուոյս դա  
րեւոր արտօնութեանց և Տէրութե  
նէն շորհուած Հրովարտակաց պա  
րունակութեանն:

— Լատինաց Դրանչիսկեան Սի  
արանութիւնն, որ Ս. Լըրկին մէջ  
Լատինաց սեպհակոմիտութեանց և ի  
րաւանց անընդմիջական հակողութեան  
պաշտօնն կը վարէ, բողոքովն անկախ  
՚ի Պատրիարքէն, նոր Տեսուչ և Նա  
խագահ մի ունեցաւ ներկայ ատոյս  
մէջ, որ ընդունուեցաւ բազմախու  
սըն գիմաւորութեամբ և մեծ շքով:  
Այն Տեսուչն, թէև և նոր կը գոյ Ի  
տալիայէն, բայց առաջ պաշտօններ  
վարած է արդէն Պաղէստինի մէջ և  
քաջամանօթ է երկիրն եւ իւր Վա  
նուց Սիարանութեանն:

— Պաղէստինի մէջ ներկայ տարւոյս  
բերքերն առատ են. ժողովուրդն քոհ  
է իւր վիճակէն: Ընծրեւներն աակա  
ւին սկսուած չ'են, բայց ցողն և տա  
րափն անընդհատ կ'իջանեն եւ անձ  
րեւներն իսկ թերեւս շուտով սկսին: